

Մեծայարդ
Տիար Սեդրակ Ատուրեան
Ատենադպիր Մխական Խորհուրդի
Ս. Երրորդութեան Եկեղեցւոյ
Թորանթո.

Յարգելի Պրն. Ատուրեան,

Առաջնորդ Արքայան Հօր հաճանգով այսու կը յիշեցնեմք
Ձեզի, թէ 1958 Նոյեմբեր 26 թուակիր եւ թիւ 81 շրջաբերականով
Ձեզի յանձնարարուած էր Թեմական Կանոնադրութեան համաձայն, դու-
մարել համայնքի ծխական ժողովը Յունուքըին կամ Փետրուարին մէջ
եւ ծխական տեղեկագիրի համար ներկայեալ հարցարանը լեցնելով ամե-
նէն ու շրջ փետր. ամսոյ կէսին վերադարձնել Առաջնորդարան:

Շատ զարմանալի է որ ցարդ չէք կատարած այդ յանձնարարու-
թիւնը: Այդ պակասը լրացնելու համար ներկայիս դարձեալ ներքակ Ձե-
զի կը դրկենք տեղեկագիրի հարցարանին օրինակը, խնդրելով որ առա-
ջին պատահութեամբ զայն լեցնելով Առաջնորդարան վերադարձնէք:

Յառաջիկայ Թեմական Պատգամաւորական ժողովին ներկայա -
ցընելիք Թեմական Խորհուրդի տեղեկագիրը ամբողջացնելու համար ան-
հրաժեշտ է մեր տրամադրութեան տակ ունենալ Թեմի բոլոր ծուխերուն
տարեկան տեղեկագիրը Յունիս տասէն առաջ:

Ապաւինելով Ձեր գործակցութեան.

Մնամ խորին յարգանօք՝

Աուրէն Մանուէլեան
Դիւանապետ Առաջնորդարանի